

ՄԻԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻՆ ԻՐԻՆՎ ՃԱՐՏԱՍԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Վերածնունդը և գիտությունների ու արվեստների բնագավառում առաջ եկած մտավոր զարթոնքը, նոր ձևավորվող բուրժուական հարաբերությունների զարգացման հետևանքով ազդությունների կազմավորումը և այս ֆոնի վրա հետաքրքրության ուժեղացումը հին՝ դասական և համազգային նոր լեզուների նկատմամբ Եվրոպայի առաջավոր երկրներում այնպիսի Լրևույթներ էին, որ առավել ցայտնությամբ իրենց արտահայտությունն էին գտնում Իտալիայում:

Հայ ժողովուրդը Եվրոպայի առաջավոր երկրների հետ կապված էր ոչ միայն առևտրական, այլև մտավոր ու հոգևոր թելերով և քաղաքական ու տնտեսական ծանր պայմաններում ձգտում էր հաղորդակից լինել Եվրոպայի առաջավոր մտքին ու մշակույթին: Եվրոպայի հետ մեր ժողովրդի մտավոր կապերն ու մշակութային ազդեցություններն ավելի են ուժեղանում XVI դ. սկզբներից, երբ Եվրոպայում երևան եկավ հայ առաջին տպագիր խոսքը:

Ինքնուրույն պետականություն չունենալը, քաղաքական անազատությունը, պարսկական ու թուրքական՝ ամենահետադիմական այս արևելյան բուհպետությունների բարբարոսական հարստահարությունն ու կամայականությունները, տիրող այս երկու ժողովուրդների իշխող խավերի կրոնական մոեռանդությունը, այլև հայ ազնվականական դասի խեղճությունը և Հայաստանում համալսարանների անկումն ու կրթական բարեկարգ օջախների բացակայությունը ևղան այն պատճառը, որի հետևանքով հայ մտավորականության մի մասը հեռանալով մայր հայրենիքից՝ իր կրթական ու լուսավորական կենտրոններն ստեղծեց հեռավոր ափերում: Սրա տակ պետք է փնտրել այն պատճառները, թե ինչու հայ երիտասարդությունը ձգտում էր դեպի առաջին հերթին Եվրոպա: Այս շարժումը տարբեր ժամանակներում տարբեր կերպարանքներ էր ստանում: Մխիթար Սեբաստացու ժամանակներում այն զուգադրիպում էր Հռոմի պապի աշխարհակալական ձգտումների և հայ ժողովրդի այն ազոտ հույսերի հետ, թե քրիստոնյա Եվրոպան պապի դրոշի ներքո կփրկի նաև Հայաստանը թուրքական ու պարսկական բռնակալական պետությունների ճիրաններից:

Հռոմի պապի աշխարհակալական ձգտումներն իրականացնելու խնդրին էին ծառայելու 1627 թ. Ուրբանոս Ը (8-րդ) պապի՝ Հռոմում ստեղծած Պրոպագանդայի դպրոցը (Ուրբանյան դպրոց) և բազմալեզվյան տպարանը: Այստեղ ուսանելու էին գալիս նաև հայեր, որոնք զավանսփոխության գնով տիրապետում էին ժամանակի եվրոպական գիտություններին և արվեստներին:

Մխիթար Սեբաստացին, որ բառիս ժամանակակից ըմբռնումով սխտեմատիկ կրթություն էլ չէր ստացել, ինքը չի սովորել այս դպրոցում, սակայն յուրացրել էր ժամանակի այն գիտությունները, ինչ որ սովորեցնում էին Հռոմի այս նշանավոր հոգևոր բարձրագույն դպրոցում: Նա, ինչպես մյուս գիտությունները, այնպես էլ հոնտորական արվեստը սովորել է Ուրբանյան դպրոցի դասադրքերով և, առաջին հերթին, այս դպրոցն ավարտած իր նախորդներից, ըստ և ավագ ժամանակակիցներից, որոնց մեջ հիշատակելի են ժամանակի երկու նշանավոր մտածողներ ու գործիչներ՝ Հովհաննես Հուլովը և Խաչատուր Էրզրուռեցին:

Հովհաննես Հուլովն առաջինն էր¹, որ նոր ժամանակների ոգով և իտալական ձևերով ներքին օրինակով հորինեց իր ճարտասանության ձևերակը, որը լույս տեսավ 1674 թ. Մար-

¹ Կան վկայություններ այն մասին, որ առաջին ճարտասանական աշխատությունը պատկանում է Սիմեոն Զուղայեցուն, սակայն առ այսօր նրա աշխատությունը չի գտնված:

սելում՝ «Համառոտութիւն ճարտասանականի արուեստի» վերնագրով²։ Մովսէսը փոքր այս աշխատութիւնը կարեւոր դեր ունի հայ ճարտասանական, ուստի և ոճարանական, գրականութեան պատմութեան մեջ, քանի որ այս գրքում է, որ հեղինակը ստեղծում է հայոց լեզվի ոճական համակարգի առաջին գիտական պատկերացումը և դնում ճարտասանական ու ոճագիտական տերմինաբանութեան հիմքը։ Կատեխիզիաների ձևով գրված այս աշխատութիւնը բաղկացած է հինգ գլուխներից, որ նա կոչում է գլուխ, տրամադրութիւն, նոխարանութիւն, հիշողութիւն և արտասանութիւն։ Նրա այս աշխատութեան հինգ գլուխներում ամփոփ ձևով շարադրված են դասական ճարտասանութեան ամենակարեւոր հարցերը։ Արդարութիւնը պահանջում է սանել, որ հետագայի համարյա բոլոր նշանավոր հայ ճարտասաններն իրենց ճարտասանական աշխատութիւնները գրելիս անմիջաբար կամ ոչ անմիջորեն օգտվել են այս գրքից։

Մյուս նշանավոր գործիչը հայատուր էրզրումեցիին էր, բեղմնավոր գրիչ ունեցող և հանրագիտական ընդգրկումների տեր մի գիտնական, որի հետ անձնական-մտերմական կապեր ունէր Մխիթար Սեբաստացին։ Նա ավարտել էր Ուրբանյան դպրոցը և Պոլիս վերադառնալով՝ ստեղծել ժամանակի համարյա բոլոր գիտութիւններին ու արվեստներին նվիրված աշխատութիւններ։ Նա ճարտասանական առաջին աշխատութիւնը գրել է շափածո և տպագրել «Համառոտութիւն իմաստասիրութիւն» աշխատութեան մեջ 1711 թ. Վենետիկում։ Հաջորդ ճարտասանական աշխատութիւնը նա գրել է 1713 թ.։ «Ճարտասանութիւն արարեալ և շարագրեցեալ ի հաշատոյն էրզրումեցոյ» վերնագրով այս աշխատութիւնն իր քննարկած հարցերի ընդգրկումով և վերլուծութիւնների խորութեամբ անհամեմատ բարձր է ոչ միայն իր ժամանակակիցների, այլև հետագայի հայ և օտար շատ հեղինակների ճարտասանական աշխատութիւններից։

Գիտութեան ու արվեստի այս մարզում ունենալով եւ էրզրումեցու նման հեղինակավոր մի նախորդ ու ժամանակակից, որն արդեն ճանաչված գրական մեծութիւն էր, թվում է, թե Մխ. Սեբաստացին այլևս որևէ անելիք չպետք է ունենար։ Սակայն կամքի ու կրօնի տեր այս մարդը ունէր որոշակի նպատակ և իր մտավոր, բարոյական ու ֆիզիկական բոլոր ուժերը ծառայեցրեց այդ նպատակի իրագործմանը։ Մխ. Սեբաստացու ողջ կյանքը գիտակցված, ըմբռնված ու ծրարված մի գործունեութիւն էր, որն ուղղված էր մի բանի՝ կրօնական լուսավորութիւններից զատ բարձրացնել մեր ազգային մտավոր մշակութիւնը անցյալի հարստութիւնները ու դարձնել ժողովրդի սեփականութիւն և պատրաստել գործիչներ մեր ազգային մտավոր և հոգևոր մըշակույթը բարգաւցնելու և եվրոպական ժամանակակից մակարդակին հասցնելու համար։ Այս առաջադիմական ծրագիրն էլ նրան թելադրում էր, որ իր դասավանդած գիտելիքները հարմարեցնէր ու ծառայեցնէր իր միաբանութեան առաջ դրված խնդիրներին ու նպատակներին։ Սրանով էլ հենց նա տարբերվում է իր նախորդներից ու ժամանակակիցներից, որոնց գիտական ու մանկավարժական գործունեութիւնը կարծես թե ինչ-որ շափով կրօն էր ինքնանպատակ բնույթ, քանի որ հետավոր ու հասարակայնորեն անհրաժեշտ բարձր նպատակ չէր հետապնդում։

Ինչպես հոետորական արվեստի ողջ պատմութեան ընթացքում, այնպես էլ մեր իրականութեան մեջ, այս արվեստի տեսութեամբ զբաղվողների ճշող մեծամասնութիւնը նախ հմտացել է քերականութեան մեջ, գրել քերականական աշխատութիւններ, որից հետո ձեռնամուխ եղել ճարտասանութեան հարցերին։ Մխիթար Սեբաստացին ևս հանգամանորեն ուսումնասիրել է նախ գրաբարի ու աշխարհաբարի քերականութիւնները, դրանք քերականական համակարգերը, գրել նախ աշխարհաբարի ու գրաբարի քերականութեան ձեռնարկներ, որից հետո միայն 1733 թ. գրել է «Համառոտ ճարտասանութիւն դիւրին ոճիւ և վայելուչ օրինակաւ» առայսօր տակավին անտիպ մնացած աշխատութիւնը, որով նա դասախոսութիւններ էր կարդում իր իսկ հիմնադրած Վարժարանում։ Սեբաստացու այս աշխատութեան հիմքում ընկած է Հովհ. Հոլովի «Ճարտասանութիւնը», որից նա վերցրել է ոչ միայն ամբողջ համակարգն ու նյութի դասակարգման սկզբունքները, այլև ողջ տերմինաբանութիւնը։ Մխ. Սեբաստացու «Ճարտասանութիւնը» ևս բաղկացած է հինգ մասից, որոնք ավանդական կարգով կոչվում են գլուխ, տրամադրութիւն, նոխարանութիւն, հիշողութիւն և արտասանութիւն։

Նախքան գլուխին անցնելը նա խոսում է ճարտասանութեան և քերականութեան տարբերութիւնների մասին, նշում, որ եթէ քերականութիւնը ճիշտ խոսելու և գրելու արվեստ է, ապա ճարտասանութիւնը նախ գեղեցիկ խոսելու և գրելու արվեստ է, և եթէ ճարտասանու-

² 1674 թ. Հովհ. Հոլովը տպագրել է իր «Ջտութիւնը», որի մեջ կա ճարտասանական կանոնների մի հատված՝ գրված ավելի վաղ ժամանակներում, «Առ ազգեցութիւնք ոմանք ճարտասանականք» վերնագրով։

թյան խնդիրն է սովորեցնել գեղեցիկ խոսելու և ճաշակով գրելու արվեստը, ապա ճարտասանի մասնավոր խնդիրն է որևէ բանում ունկնդիրներին համոզելը, նրան զվարճացնելն ու հաճույք պատճառելը: Հետևաբար, ճարտասանության խնդիրն է դառնում ապագա հոստորին սովորեցնել խոսքի համար ճշմարիտ ու ճշմարտանման նյութական ու իրական և խոսքային-լեզվական պատճառներ ու հանգամանքներ գտնել, դրանք կարգով ու պատճառաբանված դասավորել, գեղեցիկ ու հարմար ձևով զարդարել, ամբողջը հիշել և ապա պատշաճ ձևով արևասանել:

Քանի որ անցյալի գիտությունը մարդու մեջ տեսնում էր երկու կարգի բանական զորություն՝ իմացական և կամեցողական, այդ պատճառով էլ ճարտասանական արվեստի գյուտ բաժնում կարևոր են դառնում երկու խնդիրներ՝ նախ, գտնելն այնպիսի փաստերի ու մտքերի, որոնցով հնարավոր լինի ունկնդրին մի բանում համոզել, որով պետք է հաղթահարվի նրա իմացական զորությունը, և ապա. գտնելն արտահայտման լեզվական-խոսքային այնպիսի միջոցների, որոնցով միաժամանակ հնարավոր լինի զարթնեցնել զգացումներ և հաղթահարել ունկնդիրների կամքը, այսինքն՝ հաղթահարել նրա կամեցողական զորությունը:

Տրամարրություն բաժնում խոսվում է երկու հարցերի մասին՝ նախ, թե խոսքի բաղադրիչ մասերը (սկսուած, վիպումն, համահաստատումն և վճարումն կամ համավճարումն) ինչ տեղ պիտի գրավեն, և այնուհետև, թե դրանցից յուրաքանչյուրին դատողությունների ու մտահանգումների ինչպիսի տեսակներ են պիտանի:

Ճարտասանության ամենակարևոր բաժինը ճոխաբանությունն է, որին Մխ. Սեբաստացին իր աշխատության մեջ կարևոր տեղ է հատկացնում: Ճոխաբանությունը երեք հանգամանքների ապահովումն է խոսքում՝ «կատարեալ տեղեկութիւն լեզուին, վայելչաբանութիւն և բառազարդութիւն»: Լեզվի կատարյալ իմացումով խոսողը խուսափում է քերականական սխալներից, որ կատարյալ խոսքի մեջ անթույլատրելի է՝ իբրև անգրագիտություն: Վայելչաբանության համար շրտա պայման է պետք՝ ունենալ հարուստ գիտելիքներ, տիրակալտել մայրենի լեզվի բառապաշարին, կարողանալ գեղեցիկ բառեր գործածել և ունենալ լավ արտասանություն: Բառազարդությունը, որ երրորդ հանգամանքն է, ըստ Մխ. Սեբաստացու ապահովվում է պարզ ու բարդ բառերի ընտրությամբ և բաղադրյալ նոր բառերի կերտումով: Սակայն խոսքի գեղեցկության ու հուզականության, պատկերավորության ու արտահայտչականության, ուժգնության ու փայլունության համար առավել կարևոր են բառերի ու նախադասությունների փոխաբանական ու ձևավոր գործածությունները, այսինքն՝ իր տերմինով կոչած՝ այլափոխություններն ու ձևերը:

Հետևելով Հովհ. Հոլովին, նա բառերի փոխակերպությունները բաժանում է յոթ տեսակի՝ անդրաբերություն, խեղամտություն, անդրանունություն, փոխանունություն, անվանաստեղծություն, ապավարություն և անդրառություն, իսկ արտահայտությունների կամ նախադասությունների փոխակերպությունները՝ հինգ տեսակի՝ այլաբանություն, շրջախոսություն, անդրելություն, վերադրություն և հեգնություն: Ձևերը ևս Հովհ. Հոլովի օրինակով բաժանված են երկու խմբի՝ բառերի ձևերի և սիմաստների կամ դիտավորությունների՝ ձևերի: Բառերի ձևերը դասակարգված են ըստ իրենց առաջացման երեք եղանակների՝ ա) առկցությամբ կազմվածներ՝ վերակրկնում, համադարձում, բազլյուսում, համապատկում, անդրածություն, հոգնահոլովություն, համանունություն, բազմաթիվություն և համաստիճանություն, բ) գեղյումով կազմվածներ՝ խոհականություն, տրոհություն, ալիծություն, տրամալծություն և համըմբանություն, և գ) նմանությամբ կազմվածներ՝ առանունություն, նմանահանգություն, նմանավերջություն, Վուգավանկություն, հակադրություն, համափոփոխություն, վերուղղություն և երկվություն: Իմանալով հանգերձ, որ գոյություն ունեն «դիտավորությունների» անհամեմատ շատ ձևեր, որոնք հանգամանորեն քննված են էրզրումեցու աշխատության մեջ, Մխ. Սեբաստացին դարձյալ հետևում է Հովհ. Հոլովին և իր աշխատության մեջ ներկայացնում միայն առավել կարևորները, ղեկավարվելով ունկնդիրներին երկրորդական և ոչ կարևոր խնդիրներով շտաբարեղենի ու մանկավարժական տեսակետից ճիշտ նկատառումով: Նա «դիտավորության» ձևերից քննել է հարցումը, պատասխանը, ենթարկությունը, կանխումը, վերուղղությունը, երկրայությունը, հաղորդակցությունը, դերանձնությունը, այլադարձումը, ստորակերպությունը, ներլուությունը, վարքակերպությունը, երևակերպությունը, համասումը, զանցառումը, պատեհությունը, շնորհումը, տրամատությունը, ներումը, աղերսումը, ըզձումը, անծորը, բացականչությունը, արտագոչումը, զղչումը, մոռացության կեղծումը, տգիտության կեղծումը և վերահիշումը: ավելացնելով միայն երկու կարևոր ձևեր՝ խաշակերպը և համակցությունը, որոնք շեն քննված ո՛չ Հովհ. Հոլովի և ո՛չ էլ Խ. էրզրումեցու կողմից:

Ուշագրավ է այն փաստը, որ հայ ճարտասաններից Հովհ. Հոլովը, Խ. էրզրումեցին, Մխ.

Սերաստացին և Վենետիկի մխիթարյաններից Ստ. Ազոնցն ու Եփր. Սեթյանը, գտնվելով իտալական ճարտասանության ազդեցության տակ, հստակորեն տարբերակել են խոսքի գեղազիտության համար կարևոր նշանակություն ունեցող այս երկու ռեալիստիկ գիտակարգերը՝ փոխակերպությունները և ձևերը, ի տարբերություն հետազայի՝ ֆրանսիական և գերմանական ճարտասանական դպրոցների ազդեցությունը կրած բոլոր այն ճարտասանների, որոնք կարևորություն չտալով դրանց միջև եղած էական և սկզբունքային տարբերություններին, փոխակերպությունները խառնում են ձևերին, մի բան, որը ինչ-որ չափով խանգարել, այժմ էլ խանգարում է ոչ միայն խոսքի ռեալիստիկական համակարգի, այլև ռեալիստիկ կարգերի էությունը լավ հասկանալուն:

Հիշողության և արտասանության բաժիններում քննվող հարցերում, ինչպես և պարբերութի ըմբռնման մեջ Մխ. Սերաստացին որևէ նորություն չի բերում. կարելի է ասել, որ ինչպես առաջին բաժիններում, այստեղ ևս կրկնում է նախորդ մտածողների, հատկապես Հովհ. Հոլովի ասածները: Սակայն կա մի կարևոր տարբերություն նրա և իր նախորդների միջև: Մխ. Սերաստացին իր աշխատության բոլոր բաժիններում ոչ միայն տալիս է ավելի մատչելի բացատրություններ և կանոններն օժտում պարզ ու հասկանալի օրինակներով, այլև ի տարբերություն իր նախորդների, որոնք բացատրություններից հետո մեծ մասամբ տալիս են կամ ինքնահնար օրինակներ, կամ ֆրագմանտներով ելույթական գրական աղբյուրներից, իր օրինակները բերում է հայ մատենագրությունից՝ հայ պատմիչներից, հատկապես Խորենացու, Նղիշեցի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալուց, նաև Աստվածաշնչից և քրիստոնեական կրոնի հայ նշանավոր գործիչների երկերից, սկիզբ դնելով լավ ավանդույթի: Նա իր աշխատության վերջում վերածությունների ու վարժությունների համար դնում է հատվածներ՝ քաղված հայ մատենագրության առավել գեղեցիկ էջերից: Մենք այս նորամուծությունը կարևոր ենք համարում այն առումով, որ սրա մեջ դարձյալ տեսնում ենք հայոց գրական մեծությունների և հայոց լեզվի ու հայերեն խոսքի նկատմամբ հետաքրքրություն ու սեր առաջ բերելու Սերաստացու առողջ միտումը, որը հետագայում մխիթարյանների պիտի մղեր և մղեց ազգագույն և շահավետ մի գործունեության:

Պատահական չէ, որ հենց այս հայեցակետից քննելով մեր անցյալի գրական կոթողների լեզվական նյութն ու լեզվագործածության տեխնիկան, Մխ. Սերաստացին երա մեջ առաջին անգամ նկատեց և ըմբռնեց ռեալիստիկ տարատեսակություններ, որ եւս կաշից պարզ ռե (Հայամավորների լեզուն), միջին ռե (Աստվածաշնչի լեզուն) և խրթին ռե (Մ. Խորենացու և Գր. Նարեկացու լեզուները), մի գաղափար, որ հետագայում զարգացրին Վինենայի մխիթարյանները, և այս ետրամուծությունն էլ հանրագրվեց երանգ:

Քերևո հայ ճարտասանությունը հայ խոսքի տվյալներով հագեցնելու և ճարտասանությունը հայ խոսքի օրինակով սովորեցնելու հանգամանքն է եղել այն պատճառով, որ նրա «Ճարտասանությունը» թեև չի տպագրվել, սակայն ունեցել է բազմաթիվ արտագրություններ³, նույնիսկ այն ժամանակ, երբ հրատարակի վրա կային ոչ միայն Հովհ. Հոլովի և Խաչ. Էրզրումեցու տպագրի աշխատությունները, այլև Ստ. Ազոնցի «Ճարտասանությունը», որը տպագրվել է 1775 թ.: Մխ. Սերաստացու ձեռագրի ընդօրինակությունները ձեռքից-ձեռք անցել են բավական երկար ճանապարհ՝ հասնելով մինչև Վրաստան, Ռուսաստան ու Պարսկաստան:

Արդարությունը պահանջում է ասել, որ Մխ. Սերաստացու այս ձեռնարկը ավելի այժմեական էր, դպրոցահասակ մանուկներին ավելի մատչելի և շատ ավելի հարմար էր գալիս զրպ-

³ Մաշտոցի անվան Մատենադարանում են Մխ. Սերաստացու՝ 1733 թ. քրված «Համառոտ ճարտասանություն» աշխատության մի օրինակը (ձեռ. № 9634) և 24 այլ ընդօրինակություններ, որոնք գտնվում են հետևյալ համարների տակ (նշում ենք նաև առանձին, թե ժողովածուի մեջ գետնիված լինելը, արտագրության ժամանակը և տեղը, եթե հայտնի են). ձեռ. № № 828, ժող. 1770—1777 թթ., 3ամիթ, 873, ժող. 1792, էջմիածին, 874, ժող. 1764—1765 թթ. Պոլիս, 875, ժող. 1738 թ. Պոլիս, 876, առանձին, 1797 թ., տեղն անհայտ, 877, առանձին, 1765 թ., Պոլիս, 878, առանձին, 1735 թվից հետո, տեղն անհայտ, 879, ժող. 1760—1761 թթ., Հաշտարխան, 880, առանձին, 1765 թ. Պոլիս, 881, առանձին, 1753 թ., Վենետիկ, 2241, ժող., 18-րդ դար, տեղն անհայտ, 2545, առանձին, 1750 թ. տեղն անհայտ, 2962, ժող., 1765—1773 թթ., էջմիածին, 3110, ժող. 18-րդ դ. տեղն անհայտ, 3610, առանձին, 18-րդ դ., տեղն անհայտ, 8024, առանձին, 1757 թ., Փայաջուկ, 6246, ժող., 1741—1747 թթ., Կարմիր վանք, 6910, առանձին, 1753 թ., Վենետիկ, 6943, առանձին, 18-րդ դ. տեղն անհայտ, 9054, առանձին, 1753 թ., Վենետիկ, 9243, առանձին, 1768 թ., տեղն անհայտ, 10532 և Պատկանյանի արխիվում պահվող «Գիրք ճարտասանութեանը» (թղթ. 143, վավ. 182):

րոցական ուսուցման նպատակին, քան Հ. Հոլովի և Խ. էրզրումեցու աշխատութիւնները, որոնցից առաջինը խիստ սեղմ ու ամփոփ շարագրանք ուներ, իսկ վերջինը չափազանց ծավալուն էր և անհամեմատ դժվարամատչելի դպրոցականի համար: Կասկած չունենք, որ ձեռնարկի մատչելիութիւնը ևս դեր է ունեցել այն բանում, որ վրացիները Թարգմանել են ոչ թէ մյուսներին, այլ Մխ. Սեբաստացու այս ձեռագիր աշխատութիւնը և նրանով ծանոթացել հետտորակաւ արվեստին⁴:

Մխիթար Սեբաստացու դժվարութիւններով լի կյանքի ու գործունեութեան մի քնազավառն էլ մանկավարժութիւնն է: Օժտված լինելով բնական մեծ խելքով, մանկավարժի ու հետորդի բնածին անժխտելի կարողութիւններով, ոչ մի տեղ կանոնավոր ու սխտեմատիկ կրթութիւն ստացած շիինելով հանդերձ՝ նա, դեռևս 16-ամյա մի պատանի, իր մանկավարժական գործունեութիւնն սկսում է Բասենի վանքում՝ պարապելով տեղի արեղաների հետ: Այնուհետև նա իր հոգևոր մանկավարժի պաշտոնը շարունակում է կատարել Սեբաստիայի Ս. Նշան վանքում, որտեղ և 20 տարեկան հասակում ձեռնադրվում է վարդապետ, որից հետո տեղափոխվում է Պոլիս: Այստեղ նա շարունակում է մանկավարժի՝ սիրած աշխատանքը և իր մանկավարժական գործունեութիւնը հաստատուն հիմքերի վրա դնում Վենետիկի Ս. Ղազար կղզում, միաբանութիւնն ստեղծելուց հետո: 1717 թվականից մինչև մեծ գործչի մահն ընդգրկում է 32 տարվա մի շրջան, որի ընթացքում նա ստիպված է եղել հաղթահարել մեծ դժվարութիւններ: 1726 թվականին միայն նրան հաջողվում է կառուցել իր առաջին դպրատունը, որ կոչվում էր Նորնծայարան: 1727 թվականին նորնծաների քանակը 12 էր, Հինգ տարի հետո նա ընդլայնում է իր դպրատունը և կառուցում վարժարանը, որտեղ նրան աշակերտած բոլոր վարդապետների թիվը, ըստ Ստ. Ազննցի տվյալների, հասնում է 50-ի, եթէ շահչվենք 6—7 եղբայրների:

Թեև մեծ չէր նրա ունկնդիրների թիվը, սակայն մեծ էին Սեբաստացու պարապած առարկաների ընդգրկման շրջանակները: Նա ինքն էր անձամբ դասավանդում ոչ միայն այսպես կոչված քրարձրագուն ուսումնեքը՝ աստվածաբանութիւնը, հետորդութիւնը, բարոյական և քաղաքական իմաստասիրութիւնը, քերթողական արվեստը, այլև բնական ու հասարակական մի շարք գիտութիւններ. որոնց թվում քերականութիւն, թվարանութիւն, երկրաչափութիւն, աստեղաբանութիւն, տոմարագիտութիւն, երաժշտութիւն, ընդհանցողութիւն, կշռորդաբանութիւն և այլն: Դժվար է պատկերացնել, որ մեկը հսկայական կառուցողական, անտեսավարական, այլև հայագիտական այդքան եռանդուն աշխատանք կատարելու հետ մեկտեղ կարողանար զբաղվել այսքան բազմաբնույթ գիտութիւններով, դասավանդել դրանք և ոչ մեկի մեջ չիջնել միջակութեան աստիճանին: Թվարկված համարյա բոլոր գիտութիւնների գծով նա հորինել է ձեռնարկներ, որոնք մեծ մասամբ ունեցել են նրա «Ընդարտասանութեան» ձևատապիրը, և թեև չեն տպագրվել, սակայն դրանք մեր համոզմամբ այժմ էլ չեն կորցրել իրենց պատմական նշանակութիւնը, քանի որ դրանց մեջ կարելի է հանդիպել արժեքավոր գիտողութիւնների ու դատողութիւնների, մի բան, որ բնութագրական է հայագիտութեան այդ նվիրյալ մըշակի համար:

Մխիթար Սեբաստացին իր մեջ ուներ մեծ հումանիստների ներքին բարոյական լույսը և ցերմութիւնը, որ հատուկ է միայն իսկական մանկավարժներին: Ժամանակակիցների վկայութեամբ նրա ցուցաբերած հոգատարութիւնն իր սաների նկատմամբ և սաներին բնորոշ ժողովրդի աշխատավոր ու աղքատ խավի մարդկանց ընդունակ երեխաներին նախապատվութիւն տալը զարմացնում էին շատերին: Նրա կիրառած մի շարք մանկավարժական մեթոդներ՝ բացօթյա ուսուցում, հարց ու պատասխանի միջոցով ամբողջ նյութի կրկնում, ավարտաճառների միջոցով սաների գիտելիքների ամփոփում, գիտելիքների ուսուցումը խաղերի միջոցով, դիդակտիկական միջոցների կիրառում և այլն, միանգամայն նոր երևութիւններ էին մեր իրականութեան մեջ, մանավանդ եթէ համեմատութեան մեջ դնենք այն խղճուկ վիճակի հետ, որ տիրում էր մայր Հայաստանի հոգևոր դպրոցներում: Սրանով էլ Մխ. Սեբաստացին կենսագիրների կողմից իրավացիորեն դիտվել է նորարար՝ մանկավարժութեան քնազավառում: Սակայն նրա նորարարութիւնն այսքանով չի ավարտվում: Նրա մանկավարժական գործունեութեան մեջ կա մեր կարծիքով շատ ավելի կարևոր մի բան, քան նրա բերած մյուս նորութիւնները, որը հայագիտութեան մեջ չի լուսարանված ու չի գնահատված: Այս նորութիւնը կապված է նրա կողմից աշխարհարարի քերականութեան ստեղծման պատմութեան հետ:

Տարածված և արմատավորված տեսակետ է դարձել այն թուր կարծիքը, թէ իբրև Մխ.

⁴ Ն. Մառ, Հայ-վրացական հարաբերութիւնների մասին անցյալում, Քիֆլիս, 1898, էջ 48:

Սեբաստացին աշխարհաբարի քերականությունն ստեղծել է թուրքերեն լեզվով՝ նպատակ ունենալով թուրքախոս հայության մեջ արծարծելու հայ ոգին և արմատավորելու քրիստոնեական կրոնը:

Նախ ասենք, որ նա իր «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» աշխատությունն ստեղծել է ոչ թե թուրքերեն, այլ հայերեն, 1726 թ., և հետո միայն թարգմանել ու տպագրել է թուրքերեն: Այնուհետև, մեր լեզվաբանության պատմության մեջ առ այսօր չի դրվել այն հարցը, թե ինչու Սեբաստացին նախ հորինել է աշխարհաբարի քերականությունը և հետո միայն գրաբարինը:

Հայտնի է, որ հայոց աշխարհաբարի առաջին քերականության ստեղծողը եղել է Շրոդերը: Նա իր «Արամեան լեզուին գանձ» արևելյան աշխարհաբարի քերականությունը գրելով՝ հետապնդել է մի հիմնական նպատակ, այն, որպեսզի հայերեն խոսակցական լեզուն ունենա իր կառուցվածքի կանոնավորված, գիտական համակարգի բերված օրինաչափությունների ամբողջությունը, և ապագա եվրոպացի կաթոլիկ քարոզիչը այն սովորելով՝ կարողանա հաղորդակցվել հայության հետ: Այլ էր Մխ. Սեբաստացու նպատակը արևմտահայ աշխարհաբարի առաջին քերականությունը գրելիս: Նրա կարևոր մտահոգություններից մեկը գրաբարի հիմնովին ուսուցումն էր, լիակատար տիրապետել տալն այն մանուկներին, որոնք չգիտեին, չէին հասկանում մեր հին լեզուն: Գրաբարի ուսուցումը, հատկապես վերջին դարերում, չէր կարող կտրված լինել խոսակցական լեզվից, այն կարող էր սովորեցվել միայն ու միայն խոսակցական հայերենի օգնությամբ, որը սակայն միօրինակ չէր և հանգեա էր գալիս առանձին բարբառների ու խոսվածքների ձևով: Սակայն եթե Հայաստանում նույնիսկ XIX դ. առաջին կեսում գրաբարի ուսուցման համար աշխարհաբար չէին սովորեցնում և աշխարհաբարի ձեռնարկներ չէին ստեղծում, քանի որ այս ժամանակներում էլ աշխարհաբարը դիտվում էր արհամարհելի մի բան, ապա Մխ. Սեբաստացին գրապայթարից ավելի քան մեկ դար առաջ ըմբռնեց աշխարհաբարի անհրաժեշտությունն ու կարևորությունը գրաբարը յուրացնելու գործում: Նա ինքն իր ձեռքով ստեղծեց արևմտահայ աշխարհաբարի առաջին քերականությունը, թարգմանեց նաև թուրքերեն՝ թուրքախոս հայ մանուկների համար, 1727 թ. հրատարակեց «Ժիրք քրիստոնեական վարդապետության աշխարհաբար լեզու» աշխատությունը և իր միաբանության մեջ խրախուսեց աշխարհաբարից գրաբար և գրաբարից աշխարհաբար բառարանների ստեղծումը⁵, որոնք ևս կոչված էին մանկավարժական այդ պահանջը բավարարելուն և ամենևին էլ սոսկ ինքնանպատակ ձեռնարկումներ չէին, ինչպես այդ թվացել է ուսումնասիրողներից շատերին:

Միանգամայն գործնական ու արդիական այս պահանջի իրագործումը կապված էր հայոց հին լեզվի խոր և համարողմանի ուսումնասիրման և ուսուցման մանկավարժական բավական առաջավոր մեթոդի հետ: Այս առաջավոր մեթոդի ըմբռնումն էլ պատճառ է դառնում այն բանի, որ Մխ. Սեբաստացին մեր աշխարհաբար գրական լեզվի կազմավորումից և նրա զարգացման ու հեռանկարների տեսական հարցադրումներից ավելի քան մեկ դար առաջ ոչ միայն գործնականորեն ղեկավար է աշխարհաբարի խնդիրը, այլև նրան տալիս է գործնական լուծում: Ժավոք պետք է նշել, որ աշխարհաբարի տեսության պատմության մեջ առ այսօր ըստ ամենայնի չի գնահատված Մխ. Սեբաստացու դերը, որի այս նորամուծությունը ևս և՛ գիտական, և՛ մանկավարժական տեսակետներից հետաքրքրություն է ներկայացնում:

Ավելի քան երկուսուկես դարի հեռավորությունից երբ այսօր ետադարձ հայացք ենք նետում Մխիթար Սեբաստացու գիտական ու մանկավարժական գործունեությանը, նա կանգնում է մեր առաջ իբրև հայոց մեծերից մեկը, որի թողած գիտական ժառանգությունը և ծավալած ազգօգուտ բազմաբնույթ գործունեությունը զարմանքի ու համակրանքի զգացումով են համակրում մեզ հայ մտավոր մշակույթի այդ երջանկահիշատակ գործի նկատմամբ:

Ս. Մ. ПОГОСЯН—Мхитар Себастиан — ритор и педагог. — Рассматривая новые факты, автор статьи характеризует две важные до сих пор не оцененные стороны деятельности крупнейшего ученого 18-го века. Своей «Риторикой» он положил начало изучению фактов армянской литературы и языка, как педагог сыграл крупную роль в деле внедрения передовых методов преподавания армянского языка. Себастиан выдвинул идею использования ашхарабара для изучения грамматики.

⁵ Ստեղծվեցին ինչպես աշխարհաբարից գրաբար (Մկրտիչ Անանյան), այնպես էլ գրաբարից աշխարհաբար բառարաններ (Սիմոն Կոստանդնուպոլսեցի, Զաբարիա Ակնեցի, Իգնատիոս Խաչատրյան):